

# Ղիտորդական առաքելություն Լեռնային Ղարաբաղում Անհատական հաշվետվություն

Յանա Հրադիկովա

Հունիսի 20, 2012թ.

## Ղիտորդական առաքելության նկարագրությունը

Ես երրորդ անգամ հրավիրվել եմ որպես ղիտորդ հետեւելու Լեռնային Ղարաբաղում անցկացվող ընտրություններին: Ավելի քան տասը տարի է ինչ ես խաղաղասեր եւ բարեգործական ծրագրերի շրջանակներում եւ որպես հրապարակախոս զբաղվում եմ ինչպես Հյուսիսային, այնպես էլ Հարավային Կովկասի հարցերով: Իմ հիմնական նպատակը այս առաքելության իրականացման ընթացքում եղել է ԼՂ-ում իրավիճակի համեմատությունը ինչպես ժամանակի տեսանկյունից, այնպես էլ խաղաղ հաշտեցման գործընթացի միջազգային համատեքստում: Ինձ հետաքրքրում էր ոչ միայն ընտրությունների որակը, այլ նաեւ ղիտորդական առաքելության իրական կարգավիճակը:

Ես աշխատում էի երեք հոգուց բաղկացած փոքր խմբով, որոնցից երկուսը Չեխիայից էին, իսկ մյուսը՝ Կաբարդինո-Բալկարիայից (ՌԴ): Մենք որոշեցինք այցելել ընտրատեղամասեր ինչպես Ստեփանակերտում (4 ընտրատեղամաս առավոտյան), այնպես էլ հյուսիսային ուղղությամբ տեղակայված Շահումյանի շրջանի համայնքներում (այցելեցինք թվով 8 ընտրատեղամաս՝ վերջինը Քելբաջարում):

## Առաքելության ընթացք եւ շրջանակները

Ընտրությունների նախօրեին մենք հնարավորություն ենք ունեցել հանդիպել եւ առանձին զրույցներ ունենալ այլ ղիտորդների, ինչպես նաեւ երկու թեկնածուների եւ երրորդ թեկնածուի նախընտրական շտաբի ղեկավարի հետ: Մեզ մոտ առկա էին հնարավոր բոլոր տեքստերն ու նյութերը, որոնք անհրաժեշտ էին ընրական գործընթացների վերաբերյալ համարժեք տեղեկություններ ստանալու առումով:

Մենք հնարավորություն ունեինք ազատ ընտրելու, թե ում հետ ենք ուզում զրուցել եւ որտեղ ենք ուզում գնալ, ինչը բարձր ենք գնահատում: Չնայած ընտրել էինք չափազանց դժվար եւ հավակնոտ երթուղի, մասնագիտական տեսանկյունից այն պետք է բարձր գնահատել: Այսպես, մեզ տրամադրված ազատության եւ տեխնիկական պայմանների առումով բողոքներ չկան:

Միակ բանը, որը այս անգամ բացակայում էր ի տարբերություն 2005թ. ընտրությունների, դա միջազգային ղիտորդական առաքելությունների ընդհանուր եզրափակիչ քննարկումներն էին:

## Ընտրությունների որակը

Ես որեւէ խախտում չեմ արձանագրել ընտրական տեղամասերից որեւէ մեկում: Արձանագրված փոքր թերությունները (մեթոդաբանական անհամապատասխանություններ) կարելի է որակել որպես զուտ տեխնիկական բնույթի: Ընտրողների ցուցակներում, ինչպես նաեւ մյուս փաստաթղթերը փակցված էին

համապատասխան տեղերում: Ընտրողների վրա ոչ մի ճնշում չի գործադրվել որևէ մեկի կողմից: Ամեն ինչ կատարվում էր համապատասխան Ընտրական օրենսգրքի: Մթնոլորտը բոլոր տեղամասերում միանգամայն խաղաղ էր եւ իրադարձության լրջությանը համապատասխան, սակայն մարդիկ միանգամայն բաց էին, կենտրոնացած, մարդամոտ եւ թափանցիկ: Չկար զգացում, որ որևէ բան կեղծվում կամ թաքցվում է մեր աչքերից: Շատ տպավորիչ էր այն մեծ ուշադրությունը, որը հատկացվել էր ընտրատեղամասերի տարածքը կազմակերպելուն: Ավելին, պարզ էր, որ մարդիկ գյուղերում այդ օրը համարում էին շատ կարեւոր իրենց կյանքում: Միջազգային համատեքստում, Լեռնային Ղարաբաղի ընտրությունները իրենցից ներկայացնում են եզակի ազգային համաձայնության իրական օրինակ ոչ թե թեկնածուների, այլ ընտրությունների անցկացման ձեւի ու դրանց նշանակության առումով: Որքան հնարավորություն էմ ունեցել լսելու այլ դիտորդական խմբերի գնահատականները, լիովին համաձայն էմ նրանց կողմից արված դրական մեկնաբանությունների մեծամասնության հետ:

### **ԼՂ 2012թ. նախագահական ընտրությունների նշանակության ընդհանուր գնահատականը**

Դիտորդի տեսանկյունից, այսօր ամենակարեւոր խնդիրն է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի՝ որպէս անկախ սուբյեկտի ճանաչումը: Բազմիցս նշվել է, որ ԼՂ քաղաքացիների կողմից ազատ, թափանցիկ եւ ժողովրդավարական ճանապարհով իրենց ներկայացուցիչների ընտրությունը անկասկած նշանակում է, որ իրենք իրենց երկիրը համարում են պատրաստ միջազգային ճանաչման: ԼՂ ընտրությունները ինքնին հանդիսանում են հպարտ եւ հստակ քայլ, ինչպէս նաեւ ուղերձ աշխարհին: Դա ճանաչել եւ գնահատել են նաեւ միջազգային դիտորդական առաքելությունները:

Իմ հարցն է, արդյո՞ք դա բավական կլինի, արդյո՞ք այդ ձայնը հասանելի կլինի միջազգային քաղաքական կառույցներին: Ի՞նչ է փոխվել 2005 թվականից, երբ ես առաջին անգամ դիտորդական առաքելություն էմ իրականացրել այստեղ անցկացվող ընտրություններին: Պարզ է, որ խաղաղ գործընթացը չի տեղաշարժվի իր այս սառեցված կարգավիճակից, քանի որ Լեռնային Ղարաբաղը չեն ճանաչում որպէս պաշտոնական, ուժեղ գործընկեր այդ բանակցություններում:

Համոզված էմ, որ ԼՂ իշխանությունները քաջ գիտակցում են դա: Այս երկարատեւ գործընթացում, որը մինչ այժմ դեռ առաջ չի շարժվել, կարեւոր խնդիր է հանդիսանում կարգավորման գործընթացի ուղու խիստ հետեւումը: Ընտրությունները (որոնք այդքան հուզիչ էին բոլոր դիտորդների աչքերում) առաջին եւ արդեն կատարված պայմաններից են այս գործընթացում: Սակայն, կասկած չկա, որ դրանք միակ պայմանը չեն: Որո՞նք են մյուս պայմանները: Բազմակարծության առկայությունը ներքին քաղաքական դաշտում: Ազնվորեն արտահայտված այն խնդիրներն ու խոչընդոտները, որոնք դեռ չեն դրվել բանակցային սեղանի վրա: Գործընթացը սառեցված կետից առաջ չի շարժվի, քանի դեռ բոլոր ներգրավված միջնորդները չեն սկսի աշխատել առկա խնդիրների վերաբերյալ համաձայնության հասնելու ուղղությամբ: Միջազգային քննարկումները ակնհայտորեն կառչել են տարածքային վեճին: Այն չի աշխատում, քանի որ սա արատավոր շղթա է, որի մասնակիցները չեն կարողանում քննարկել որևէ ընդհանուր խնդիր: Իմ կարծիքով՝ այս գործընթացի հիմնական նպատակը պետք է լինի այն, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ինքը սկսի խաղաղ գործընթացի միջնորդի դերը:

Հաջորդ քայլը անելու պայմաններից մեկն էլ այն է, որպեսզի ինչպես միջազգային, այնպես էլ տեղական քաղաքական իշխանությունները լուրջ աշխատանք ծավալեն բանակցությունների առանցքային հարցերի ձեռնարկման ուղղությամբ, որոնք կապված են ԼՂ ժողովրդի եւ հակամարտությունից տուժածների իրական կյանքի հետ:

Ես բավական քաջություն տեսա այն մարդկանց մեջ, որոնց հանդիպեցի գյուղերում, քաջություն՝ ազատ արտահայտվելու կյանքի արժեքների, իրենց ներկա եւ նախկին բնակության վայրերի, ազգային պատկանելիության եւ ընդհանրապես միջազգային հանրության մաս լինելու վերաբերյալ: Իշխանությունները պետք է ավելի քան երբեւէ գիտակցեն այն փաստը, որ գալիս է մի պահ, երբ պետք է քայլ առաջ կատարել, եւ ոչ միայն կազմակերպել որակյալ ընտրություններ, այլ լսել ու իրազեկել մարդկանց այն մասին, ինչ կատարվում է արտաքին աշխարհում: Առանց նման երկխոսության ոչ միայն իրավիճակը չի տեղաշարժվի սառեցված կետից, այլ նաեւ կվերածվի հուսահատ զգացմունքների եւ որպես այդպիսին հեշտությամբ խոցելի կլինի գաղափարախոսության ենթարկման ու ազատության կորստի առումով, այն ամենաթանկ արժեքի, որը դեռ առկա էր այս ընտրություններում:

Ես հասկանում եմ, որ այս վերջին պարբերությունը կարող է դուրս լինել սովորական դիտորդական առաքելության սահմանների շրջանակից: Որպես արդարացում, խնդրում եմ այն դիտարկել որպես իմ խորին երախտագիտության արտահայտություն այն բանի համար, որ արդեն երրորդ անգամ ինձ հրավիրում էք ձեր բնական դրախտ, որտեղ իմ բոլոր հանդիպումները մարդկանց հետ կմնան իմ սրտում: Ես իրոք մտահոգված եմ ձեր ապագայով եւ ազնիվ չէի համարի չկիսվել ձեզ հետ իմ մտքերով:

Շնորհակալություն, մաղթում եմ Ձեզ լավ հնարավորություններ ու ակնկալիքներ եւ խաղաղ ապագա:

Հուլիսի 20, 2012թ.

Ստեփանակերտ